

ՏՐԱԿՏԱՆԻ ՏՐԱԿՏԱՆԻ

ԾՐԱԳԻՐ

Զարգացման Զանգարման և Զոհողության

ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱԿՏԱՆԻ, ԹԻՒՄ 49

ՕԿՏՈՒԲԵՐ

ՈԿՏՈՒԲԵՐ 29 (ՕԿՏՈՍՏՈՍ 1841

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

19 (ՊԵՏԱԿԱՆ)

Եւրոպայի զեապաններէն մէկ քանին երթալու պատրաստութիւն տեսնալուն պատճառաւ, յի հաստատու լըքան կամեցաւ որ պատիւ մը ընէ անոնց, ի նշան այն բարեկամութեան, որ խորհրդայն Վոլադ ունի օտար տէրութեանց հետ: Ուստի ամսուս 14 ին բոլոր զեապանները, յայիտ պէյը և Սամի պէյը, նաեւ տէրութեան մեծամեծ աստիճանաւորները, քաղաքային ու պատեւազմական պաշտօնատարները ժողովուրդեան Հայտարարութեան զաշտին մէջ պատրաստուած վրաններուն տակը, ներկայ գտնուելու արքունի զօրաց կրթութեանը հանդէսին: Ժողովուրդին բաղմունքիւնը և զօրաց շատութիւնը տեսարան մը կը ձևացնէին աս զաշտին մէջ: Ութը գունդ հետեակ զօրքեր կային, ութը նիզակաւոր ձիաւորներու և չորս կարգ թընդանօթներ ամէն մէկին ութը թնդանօթ, որոնք փոփոխակի կրակով կրթութիւն ըրին: Ին զօրքերը՝ որոնց վրայ Վարա Սէհէմէտ լին փաշան կը հրամայէր շատ յաջողակութիւն ցըցուցին. երկու ժամի չափ կրթութիւն ընէին ետեւ, զատուցան մէկը մէկէն Վորին յի հաստատութեան վրանին աւջը, որ անձամբ տեսաւ անոնց ունեցած յաջողակութիւնը կրթութեան մէջ:

Նորին Վսե. Ռիֆաթ փաշան արտաքին գործոց պաշտօնատարը շատ պատիւ ըրաւ զեապաններէն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԻ

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ ՊԵՏԱՌԻԹԻՒՆ:

Լինիւք կամ երջանկութիւն:

(Հարունակութիւն:)

Սեծ նախատիւքով մեկնելով անկից շատ ցաւեցաւ սիրտը, վասն զի մէկ վայրկեանի մէջ իրորս վեցան բոլոր իր յոյսերը և երազի մը պէս ոչինչ եղաւ ան երջանկութիւնը որուն կը յուսար թէ հասած է: Ուստի լսիայի զանազան կողմերը ժուռ գալով չէր գիտեր թէ ուր կենայ, և միշտ անհաստատ և դժգոհ էր: Վերջապէս միտքը դըրաւ դէպ ի Զինիմաչին երթալ:

Հոն տեղ մէկ օր մը երբոր ամայի դաշտի մը մէջ ժուռ գալով արտօնութեամբ կը մտածէր իր գլխէն անցածներուն վրայօք: Հեռուէն ներքեւ ձայներ և ուրախութեան աղաղակներ լսեց. ուստի զայն իմանալու համար դէպ ի ձայն լսած կողմը գնաց, և գեղ մը հասնելով գեղացի մարդիկներու և կնիկներու բաղմունքի մը տեսաւ, որոնց

լուսն որ նստած էին մասնաւոր վրանի մը տակ: Ուրիշ շատ վրաններ ալ կային՝ որոնց տակը բազմէր էին խորհրդայն Վրան զօրհակները և պատեւազմական մեծամեծ պաշտօնատարները. ասոնցմէ քիչ մը հեռու էր Վալիտէ Սուլթանին ու պալատական տիկիններուն վրանը:

Վրանը մը նիզակաւորներու մէկգմէկէ հեռու կայնած զաշտին մէջ կրթութիւն ընող զինուորներէն բոլորը միմեկին մը չափ տեղ պահպանութիւն կընէին, ուսկից անդին անցնելու ժողովուրդին հըրաման չի կար:

Զօրաց հանդէսը լըմնալու տոնէր Վեհափառ լըքան հրամայեց արքունի պալատին մեշիք Վ. Վսե. Ռիֆաթ փաշային որ սէր ցուցունէ եւրոպացի պաշտօնատարներուն, ու խնդրէ որ պատմեն իրենց տէրութեանցը (սամանեան զօրաց քանի մը ատենէ ի վեր ըրած յաւաքողութիւնը պատեւազմական արհեստի մէջ:

Կէս օրէն հինգ ժամ հոբը, արքունական կառքերով զեապանները լսակիւտարի ծովեզրը իջան, ուր տեղ Սիւս անուն Ռուսաց շոգենաւը մտան որ կը սպասէր հոն, և Պէյիւք տէրէ գացին:

Նորին Վեհափառութիւնը ու Վալիտէ սուլթանն ալ նստով իրենց պալատը դարձան:

Բնաւ անկարգութիւն մը չի պատահեցաւ զօրաց հանդէսին տոնէր, թէպէտ անթիւ ժողովուրդ է կած էին աս տեսարանը վայելելու:

մէ ոմանք նուագարանով կերպէին, և ոմանք պար բըռնած կը խաղային: Օրհնաւորով աս պարը ուրախութեանը վրայ, որ ամենուն երեսին վրայ յայտնի կերեար, մտնեցաւ մէկ ծերունիի մը որն որ անոնց ուրախական հանդէսը զննելով կը զուարճանար, և յայտնի կերեար երեսէն որ իր ծերութեանը մէջ ընաւ կորուսած չէր առուգութիւնը: Հարցուց անոր թէ ի՞նչ է պատճառը այն անսովոր հանդէսին: Սենք բնաւ անսովոր հանդէս չունինք ըսաւ ծերը, այլ այն օրերը որ մեր հանգըստեանը նուիրելով գործքի չինք պարապիր, աստուածային պաշտօնը կատարելէն ետեւ մնացեալ ժամերը ասանկ անմեղ զբօսանքով և ուրախութեամբ կանցընէինք: Ուրեմն դուք շատ քաղցր զուարճութիւնով հատուցում կընէք ըսաւ լըքմէք, ձեր քաշած ծանր աշխատանաց և նեղութեան փոխարէնը, որով ուրիշ օրեր բռնադատեալ էք թշուառ կեանք վարելու:

Իս խօսքէն ժպտելով ծերունին պատասխանեց. վաթսուն տարին է վէէէ, որ այս կեանքը կը վարեմ, և գոհութիւն լստուծոյ որ բնաւ թշուառութիւն չի տեսայ. աղէկ գիտեմ որ ձեզի պէս մեծամեծները անանկ կը կար-

կաւարութիւնը՝ որ միշտ յայտնի կընէ իր խընամբը որ ունի բրիտանաց հպատակներուն վրայ, հրովարտակ մը կարգաւ արմաւ բոլոր մզկիթներու մէջ, որով կը հրաւիրէ տաճիկները որ միշտ մարդասիրութեամբ վարելին հպատակ ազգերուն հետ և իրեն եղբայր յարգեն զանոնք խօսակցութեան և գործի մէջ:

Նիւէ կոչւած շոգենաւը՝ որն որ լըքանը իրաւէն եկաւ, Վորին Վեհափառութեան ընծաներ բերաւ Սէհէմէտ լըքի փաշային կողմանէ, մեծ ունեղջեր (կէրկէտան) մը ու եօթը հատ ալ արաբացի աղին՝ ձիեր:

Յիշեալ շոգենաւով եկաւ նաեւ Սուլթանֆա պէյ հաղարարութեամբ՝ որն որ կաւարութեան կողմանէ լըքանը իր զօրաց մէջ գտնուող ասորեստանցիներուն հրաման տուց որ իրենց հայրենիքը դառնան. Վ. խորհրդութիւն Սէհէմէտ լըքին խոստացաւ աս հըրամանին հաղանդելու. ու արդէն սկսած ըլլալով՝ կոստանդնուպոլիսէն խրկուած հրամանը կատարելու, Սուլթանֆա պէյը ետ նստած որ խորհրդայն Վրանէ խմացունէ աս լըքը:

Լմուս 16 ին փէյիթի Էֆէթեթ անուն (սամանեան շոգենաւը Սուլթանէն եկաւ, որու կաթսաները վնաս կրած էին ճանապարհին օգը դէշ ըլլալով. Վ. Վսե. Ռիֆաթ փաշան որ իր խորհրդութեանով չափաւորութեամբ վարվելով կղըին հանգարտե-

ծեն թէ հոն միայն կարելի է երջանկութիւն ըլլալ ուր տեղ որ շատ ոսկի արծաթ և մեծագին գոհարներ կը գտնուին: Իայց մենք որ գեղացի ենք բոլոր ձեր քաղաքներուն և պալատներուն մէջ մանաւոր կը լսենք ու կը տեսնանք կերպ կերպ աղմուկները և սիրտ մաշեցնող անհանգըստութիւնները որ միշտ կը տիրեն հոն անըմէք. անատեւը հարստութեան համար նախանձելու տեղը ձեր վրայ կը գթանք. խաղաղութիւնը ձեզի համար չէ, ինչու որ ագահութիւնը, փառասիրութիւնը, նախանձը և անմիաբանութիւնը միշտ կը յափշտակեն զայն ձեր մէջէն, և խաղաղութիւն չեղած տեղը երջանկութիւն ալ չըլլար: Հիշաւի մենք ձեզի պէս հարուստ չենք, ոսկի և արծաթը հազիւ թէ մեր մէջը կը ծանաչի. իայց դուք ձեր գանձով ինչ որ ուղէք ծախու կառնէք, մենք մեր ոչխարներէն և արտերէն մեզի համար բաւական պէտք եղածը ստանալով գոհ չըլլանք:

Լըքմէք զարմանալով աս խօսքերուն վրայ, ուղեց իմանալ թէ ի՞նչպէս կարող է իր աղքատութեան և աշխատանացը մէջ վայելել այն երջանկութիւնը՝ որն որ ինքը չի կրցաւ գտնալ այնքան հարստութեան և հան-

ցուց, ժողովուրդին հանգստութիւնը ան կերպով ապահովելէն ետեւ որ օր ըստ օրէ աղէկ ըլլայ, 11 ին մեկնեցաւ անկէց պատերազմական նաւերովը դէպի Սամոս երթալու, ուր սեղ քանի մը օր կենալէն ետեւ Քիոս պիտի անցնի, և հաւանական է որ իգ միւր ալ երթայ: Սեծ փութով կը նորոգվի Վէյլքի Ը Էփէթը, որ պատրաստ եղածին պէս խրկուելու է մեծ ծովակալին՝ որ աս շոգենաւը մտնայ և շուտով մայրաքաղաքը դառնայ:

— Իրեք օր առաջ Վէյոլը հրդեհ մը եղաւ ռուսաց զեւապանի բնակարանին ետեւը, բայց շուտով օգնութիւն հասնելով մարեցին զայն. միայն բռնու մը ու երկու տուն երեցան:

Նոյն օրը կէս օրէն իրեք ժամ ետքը Կոստան գընուպօլսոյ մէջ Նյոյի խափու բաւած տեղն ալ հրկիզութիւն պատահեցաւ, հովը սաստիկ ըլլալով կրակը բոլորեցեցաւ և մինչև գիշեր քշելով շատ տուններ երեց:

Արքունական Կոստ հետագայ շրջաբերական թուգթը խրկեց մայրաքաղաքի մէջ գտնուող զեւապաններուն, անցած ամսու 23 ին:

(16 Նոյեմբեր 1257:)

Որովհետեւ շարունակ մեծաքս կը փախցունեն մարտէն Տարտանէլիի ու իգմիրու մէջ եղած նաւահանգիստներէն, նաև Վալաքաիի և Գալաթիայի, Կարամուսալի, Կալայի կողմերէն և ուրիշ տեղանքներէն ևս, քանի մը ատեն է որ յատուկ հրաման եղած է այն կողմերու կառավարիչներուն, որպէս զի զգուշութիւն ընեն այս անկարգութեանը առաջը առնելու համար, ու քանի մը փոքրիկ նաւեր ալ խրկուած են յիշեալ տեղանքը որ պահպանութիւն ընեն:

Բայց խել մը փոքր նաւեր կան որոնք ծածուկ այս առուտուրը կընեն միշտ այն կողմերը, ու աւանակ ցուցունելով որ իբր թէ ցորենի և ուրիշ արմըտիք առնելու եկած են, մետաքս ծախու կառնեն և կը տանին. նմանապէս ուրիշ ապրանքներ ալ՝ որոնց տասանորդը զեւ տըրւած է:

Կառավարիչները թէպէտ դիտեն այս բանը,

բայց գաշնադրութիւններուն համեմատ, չեն կըրնար յիշեալ փոքր նաւերը մոնալ ու մէջի եղած ապրանքը աչքէ անցնել, վասն զի ամենն ալ եւրոպական դրօշակներով են. ահա այս է պատճառը որ ինչպէս հիմայ կը տեսնան այս անկարգ սովորութիւնները ու չեն կրնար հարը գտնալ որ խափանի:

Բայց որովհետեւ քանի որ ասանկ մնալու ըլլայ այս բանը, այնքան կը պակսի մարտին եկամուտը, նաև մետաքսի առուտուրը ընող համեստ վաճառականներուն ալ շատ զեն կըլլայ, վասն զի աս ապրանքին մաքսը չի հատուցանողները խիստ վար գինով կը ծախեն, ուստի սաստիկ հրաման խրկուած է վերոյիշեալ կողմանց կառավարիչներուն որ ինչպէս արդէ կար առաջ այն փոքրիկ նաւերուն, ասկէ ետեւ ալ զգոյշ կենան չի թողուն բնաւ որ զանանք ան կողմերը. նաև պահպանութիւն ընող նաւերն ալ թէ որ տեսնալու ըլլան այն նաւերէն որ աս հրամանին դէմ այն նաւահանգիստները մոնալու կը համարձակին, բռնեն իսկոյն զանոնք ու հոս խըրկեն:

Նս յայտարարական գիրը ձեզի խրկուեցաւ, Տէր, որ դուք ալ հաճիք հարկաւոր եղած տեղանքը ծանուցանելու այս կարգադրութիւնը:

ԶՄԻՌՆԻՒ

29 () Դոստոս:

Նորին Վսեմութիւն Խաչի փաշան մեծ ծովակալը որ Կիւրտէն գառնալու ատենը Սամոս հանդիպած էր ուր հարկաւոր էր իր ներկայութիւնը քանի մը բարեկարգութիւններ ընելու համար, ամսու 26 ին իգմիր հասաւ իրեք նաւով որոնց մէկը մեծ էր և երկուքը փոքր:

Տեղոյս կառավարիչը և բոլոր մեծամեծ գործակալները իսկոյն գացին Նորին Վսեմութեան նաւը ուրախակից ըլլալու անոր որ յաջողութեամբ զարձաւ Կիւրտէ կողմին ապստամբութիւնը նուաճելէն ետեւ, նաև աղաչեցին որ հաճութիւն տայ ատեն մը իգմիր կենալու: Քաջասիրտ ծովակալը ուրախութեամբ ընդունեց անոնց խնդիրը, բայց

խմացուց թէ Նորին Վսեմութեան յատուկ հրաման ըրած է իրեն որ առանց ուշանալու Կոստանդնուպօլիս դառնայ: Նս յիշաւ երկու օր առաջ իգմիր հասած էր Նս. Վսեմութեան շոգենաւը Վիսիթի Պահրի կոչուած, որու կը հրամայէ Կիւրթ նաւապետը: Նս փառաւոր նաւը Վսեմութեան Կիւրթ խրկած էր, որ անով Խաչի փաշան մայրաքաղաքը դառնայ. ու ինչպէս հիմայ ասանկ պատիւ ընաւ տէրութեան պաշտօնատարներուն մէկուն եղած էր: Սատի Նս. Վսեմ. չորեքշաբթի գիշեր մեկնեցաւ, 36 ժամ իգմիր կենալէն ետքը:

Յիշեալ ծովակալը թէպէտ քիչ ժամանակ կէցաւ իգմիր, բայց շատ աղէկ տեղեկացաւ իգմիրու ներկայ վիճակին, ու հարկաւոր եղած ծանօթութիւնները առաւ, որպէս զի Կոստանդնուպօլիս հասնելուն պէս հոգ տանի քաղաքիս կառավարութեանը հարկաւոր եղած բարեկարգութիւններուն: Նս երբոր իմացաւ թէ քաղաքիս պահապանները սակաւաթիւ են, իսկոյն 300 հոգի կանոնաւոր զօրքերէն ցամաքը հանել տալով տեղոյս կառավարիչին յանձնեց:

Բարձրադաստիւ ծովակալին իգմիր հանդիպելը, որն որ կը յուսանք անշուշտ թէ օգտակար պիտի ըլլայ քաղաքիս նշանաւոր եղաւ նաև անանկ բարեկարգութեամբ մը որ մեծ ուրախութիւնով կը փութանք ծանուցանել հասարակութեանը: Կրակի տըրւող խեղճերուն որորմութիւն ժողովուր համար հաստատուած Կարգադրական Ընկերութեան անդամներէն քանի մը հոգի Նս. Վսեմութեան այցելութիւն գացին, որ շատ սիրով ընդունէին և տքը զանոնք խօսք տըրաւ որ Կոստանդնուպօլիս երթայ նէ ձեռքէն եկածին չափ աշխատելու է իգմիրի մէջ գտնուող բազմաթիւ խեղճերուն համար. ու 20,000 զուռուշ որորմութիւն շնորհելով խնդրեց որ զինքն ալ մասնակից ընեն իրենց բարեգործութեանը:

Հընդի Կոստանդնուպօլիս փաշան որ մօտեւա Վիսիթի կառավարիչ անուանեցաւ, առջի օրը Նոյն կողմին հասեր է ու շատ պատուով ընդունեն են զինքը:

Կատու թեան մէջ. Վստի փաքը զրա քիչ մը կենալ անոր քովը, զուարճանալով միանգամայն ան գեղարդիներուն վրայ որոնք անմեղ խաղերով կը պարսպէին իրենց զօստներին: Ըստ անհնար կերպի ինծի ըսաւ. նա, թէ ձեզի պէս մարդիկ ինչպէս կրնան երջանիկ կոչիլ, որ պարտաւոր են միշտ կենանքերին աշխատութեան և թշուառութեան մէջ անցունելու: Աշխատութիւնը պատասխանեց ծերունին, շատ ծանր նեղութիւն է անոնց՝ որ սորված են միշտ գատարկ կենալու. բայց մենք շարունակ պարսպեալ ըլլալով՝ շատ ակորժելի է մեզի: Նս բնաւ անանկ արքաւոր ատեն անցուցած էր, ինչպէս երբոր ակարութիւն մը պատճառելով պարտաւորեցայ զաղարիկ իմ սովորական աշխատանքէս և անգործ մնալ. անասներ կանցնէր իմ ժամանակս անտանի ծանրութեամբ և ամեն մէկ վայրկեան հազար տարի չափ կերակար ինծի: Երբոր իմ գործքերուս կը պարսպիմ, գրեթէ չեմ խմանար ինչպէս իրիկուն ըլլալը. և բնաւ չեմ զգար այն անտանի ծանրութիւնը՝ որնոր փորձով իմացայ երբոր սակարկեցայ գատարկ մնալու. ու շատ անգամ ալ ինչպէս քաղաքը կը մանամ նկարեալ կը սեւեւամ զայն գատարկ կեցող

մարդոց դէմքին վրայ: Բայց շատ ծանր և անտանելի բան է, ըսաւ Նսմէք, ձեր ամեն օրվան աշխատանաց ծանրութիւնը, որն որ կը պարտաւորիք կրել:

Աշխատանաց ծանրութիւնը, պատասխանեց ծերունին, շատ դառն և անտանելի լուծ մըն է մէկ գերի մը որ ակամայ կամք կը պարտաւորի կրել զայն, և բնաւ կարող չէ հանգստանալ հարկ եղած ատենը. բայց մեր մէջը անանկ չէ. երբոր ևս կը հոգնիմ, պէտք եղածին չափ կը հանգչիմ որ յետոյ մեծ ու ժող պարսպիմ իմ աշխատանքիս, և իմ կամքս աշխատելով կարողութիւնէս ելնել բան չեմ ընել: Վրեմն ասանկ աշխատութիւնը բնաւ ծանրութիւն մը չէ, այլ ակորժելի կը լինի մըն է անկողնոր կը փարսաւ մարդուս կերպ կերպ ձանձրացուցիչ մատանջութիւնները. անով մարմնը առողջութիւն և զօրութիւն կը ստանայ ու աղաւ կը մնայ գէշ հիւանդութիւններէն որ շատ անգամ կը պատահի անգործ մարդոց. աշխատելէն ետեւ շատ անուշ են կերակուր ու քունը, և գործելու ատենն ալ բոսնելու պատիւներուն վրայօք մօտձելով շարունակ բերկրութիւն ունինք, որն որ թէպէտ գոյք հարուստ և մեծամեծ մարդիկներէք բայց բնաւ

չէք ծանշար: Վմեն մէկ ակօսը որ կը բանամ արտիս մէջ, միտքս կը բերէ հոն ձին ուր սխալար օրը. և աս մատուցութիւնը մեծագէտ կը զուարճանէ զիս:

Բայց երկար աշխատանքէն ետեւ, ըսաւ Նսմէք, ձեր քաղաքը պատուը գրեթէ ոչինչ բան մըն է թէ որ բազաւտենք աս բաներուն հետ որ մեծատունները կը վայելեն ասանց աշխատանաց և նեղութեան:

Երբոր ևս ծարւիմ պատասխանեց ծերը, կը զովանամ աս փոքրիկ գետէն խմելով որ մեր մօտէն կանցնի, ուրեմն ի՞նչու պիտի հոգ ընեմ թէ ուրիշները կը խմեն բոլոր շոյանիլ: Իմ արտաւ ոչխարներս կը մատուցանեն ինծի բոքան որ բաւական է իմ բազանքս կատարելու և զիս գոհ ընելու, ի՞նչ պիտի ընեմ ասկէց աւելին: Վէկ մարդ մը շատ ունենալով երջանիկ չըլլար. այլ պիտի գիտնայ վայելել հանգստութեամբ ինչ որ արհեստը կամ բազմ կուտայ իրեն, և միշտ պարտի գոհ ըլլալ իր վիճակին: Կուք որ կը լուրջ առատութեան մէջ յիշաւ մեզմէ վիկի աղբաւ էր, ինչու որ ձեր աստիճանէն էլիք մեծ

* Զոյանկ, մեծ գետ մըն է Արմինաիի մէջ:

Քաղաքիս Մարդասիրական Բնկերութեան ժողոված ոգորմութիւնը ինչպէս հիմա 185,110 զուգուէն աւելի եղաւ :

Կոստանդնուպոլսոյ Բնկերութեան ժողոված ոգորմութիւնը նմանապէս իզմիրու խեղճերուն համար 91,000 զուգուէն աւելի է : Կը յուսանք նաեւ որ մօտ օրերս լուր կառնենք թէ Լաւոսպոլսու երեւելի քաղաքներուն մէջ ալ առատ ոգորմութիւն ժողովւած է իզմիրու համար :

— Մեծագոյն Սարգսեան Հակոբ աղան ամիս ու կէս իզմիր կենսային ետքը , աս առաւօտ զաղդիւս կան շոգենաւով Վերս գնաց ուսկից ձրեատ ու անկէ վեննա երթալու է :

— Երեկ զիշէր անգղիական վաճառականի նաւու մը նաւապետը ինքը զինքը ծովը նետեր խեղճովեր է . աս զգալով անձին յուսահատութիւնը ինչ ԲԼ լալը չենք գիտեր :

— Վեհափառ Բրքան՝ Մհհհմետ Բի լի փաշայի տղան Սաիտ պէյին ու իր ներքին խորհրդականին Սամի պէյին Փէրիզութեան աստիճան շնորհեր է :

Գորիէ Տերօփ ըսած օրագրութիւնը՝ Բնդիւայի երեւելի հարուստներուն ունեցած տարեկան եկու մուտները կը հրատարակէ , որն որ պատշաճ կը համարինք մենք ալ որ զինքը հոս , մեր յարգի ընթերցողներուն զբօսանք մը տալու և միանգամայն անոնց միտքը ձգելու համար թէ որչափ հարուստներ կը գտնուին աս օրվան օրս Բնդիւայի մէջ , որոնց հալաւութեան բուն պատճառ իրենց եղբայրասէր ու ազգասէր ոգին է , նաեւ անգաղար ջանքը և աշխատութիւնը որ ունեցած են և ունին միշտ վաճառականութիւնը ծաղկեցրնելու , արհեստները օր ըստ օրէ կատարելադրելով այն աստիճանը հասցընելու , որոնք կապիշեցունեն մարդուս միտքը :

Ընդէս թիւերն

Կորուսակներուն տիպի դքսին տարեկան եկամուտը ,	200,000
Պիւշէլէնքի դքսինը՝	200,000
Բրքիւրայէ անունով մէկը որ Վարսա վիրայի (պէսպէսի) մը որդի է ,	200,000

մեծ բաներու կը ցանկար . մենք քիչ բանի կարօտելով դիրքին կը հոգանք մեղի պէտք եղածը . ուրիշ հաշարաւոր բաներ կան որ ես չեմ՝ ծանօտար և չեմ հոգար , բայց մեզի հարկաւոր երեւնալով միշտ կը հոգար անոնց վրայօք . և թէ որ չի կրնար գտնալ կամ ձեր բաղձանքը կատարել , ան ասունը մշտնջենաւոր պատճառ կը ըլլան նեղութեան և դժգոհութեան :

Հաւատա՝ ծերունիի մը ըսածներուն , որ երկար փորձառութիւնով աղէկ սորված է . և իր կեանքին մէջ շատ անգամ քաղաքներու մէջ դըրճովով տեսած է պիւքսան աղմուկ և խռովութիւն որքան որ դաշտերու հանդարտութիւնը և լուսութիւնը : Իրեք բան կայ , և աս իրեք բանը շատ հարկաւոր է երջանկութեան իմ հանգարտութիւն , զբաղանք և բուսականութիւն : Միշտ հանգարտ պահէ փրօք , հեռացընելով հակառակութիւնները և անմիաբանութիւնները . սանձելով բնութեան անկարգ կիրքերուն ու յաղթելով կամ համարելով քաջութեամբ բոլոր շար փորձութիւններուն՝ որ մարդուս կը պատահին : Դատարկ մի կենար այլ ջանա՝ հալածել ձանձրութիւնը դատարգ օրերի մը պարտապիւղով : Կոհհմութեամբ վար-

Հերդօրտ Մարքէզը ունի՝	120,000
Լուս Վրանհիս Լաճերդըն՝	100,000
Նիւ Քաղաքի դուքսը՝	60,000
Լուս Վիլէնկըն՝	50,000
Մարքէզը Ուէսթմինսթըրի՝	200,000
(ասունէ մը ետեւ ասոր եկամուտը պիտի ըլլայ)	365,000)
Դուքսը Սուտերլանտիայի՝	200,000
Դուքսը Գլէվլանտի՝	200,000
Լուս Վորդմէն՝	100,000
(ասունէ մը ետեւ ասոր եկամուտն ալ կը հասնի մինչեւ ,	400,000)
Սըր Շոն Լյոյոս՝ սեղանաւոր ,	250,000
Դուքսը Տըվօնսթըրի՝	100,000
Մարքէզը Բնկէզէյի՝	80,000

ԵԳԻՊՏՈՍ

Բնքսանդրիս , 14 օգոստոս : Մօտերս քաղաքական կառավարութեան մէջ նշանաւոր բան մը չեղաւ :

Լմուտս 8 ին Պարնէզ հաղադարձեալը Բնդիւայոց ընդհանուր հիւպատոսը , մեծ հանդէսով փաշային գնաց տեսութիւն ընելու . անգղիական նաւերուն հրամանատարներուն ու պաշտօնատարներուն մեծ մասը անոր հետ էին . նաեւ բոլոր անգղիայիները . ասոնցմէ ի զատ զօրքեր ալ կային հանգիւս Նուա գարանով (մուգիգայով) և շատ խափառներ ալ՝ որոնք փաշային կողմանէ խրկուած էին անոր :

Փաշան ոտքի վրայ կայնած էր սրահի մէջ երբոր Պարնէզ հաղադարձեալը ներս մտաւ , ուր տեղ մեծ պատուով ընդունեց զնա . յարգական զրոյցներէն ետքը հիւպատոսը յիշեց փաշային առաւօտունին ազատութիւնը՝ որն որ խոստացած էր , ու փաշան ալ աս պատասխանը տղվաւ : « Կոստացայ դայն և պարտիմ կատարել , բայց ժամանակի կը կարօտիմ մինչեւ որ ուրիշ կերպով կարգի դնեմ իմ կառավարութիւնս » :

Պարնէզ հաղադարձեալը երբոր իր բնակարանը դարձաւ , նոյն օրը իր պաշտօնակիցները անոր տե-

կէ Լատուճոյ բարիքները , թէ շատ ըլլայ թէ քիչ գոհ եղիր . և աս ըսածներս թէ որքանս կը ըլլաւ երջանիկ :

Բնդիւայ Բիմէք մէկ գիւղական մարդէ մը այնքան իմաստուն խօսքեր լսելուն , և ամենէն էվել անոր վերջին խօսքերը խորունկ տպաւորեցան իր սրտին մէջ . և թէպէս վերջին բարեւ տալով մեկնեցաւ հոնկէ , բայց ըսածները կրկին միտքը կը բերէր , և քանի որ կը խորհէր իր սրտին մէջ . այնքան ճշմարիտ կը թուէին իրեն ծերունիին խօսքերը : Կըսէր ինք իրեն , յիշաւ ան երջանկութիւնը որ մինչեւ հիմա մեծ ջանքով կուգէի գտնալ՝ կը բնակի եղեր ան դաշտերուն մէջ ուր տեղ ծնած էի , ու ան անգլաններէն մեկնելով՝ հեռացայ երջանկութեան : ՄՏ գոցեալի վտանգաւոր ըլլայ թէ որ յայտնեմ քարանձախն մէջ գտածս , որով ինքզինքս երջանիկ կը համարէի . բայց թէ որ ըստ մտածելու ըլլամ , ի՞նչպէս կրնամ ուրիշ բան լսել . մինչեւ հիմա ի՞նչ օգուտ տեսայ զայն չի յայտնելէն :

(Դաւորդը հետեւեալ թիւով :)

սութիւն ընելու գային , և անգղիական զրօշակը բացվելուն պէս բերդէն 21 թնդանթ նետելով բարեկեցին զայն :

Ներս գետը օրէ օր սաստիկ բարձրնալու վրայ է , և թէ որ աս սոսկալի առաւօտութիւնը դադրելու չըլլայ . շատ դէշ վնասներ պիտի հասցընէ :

Կառավարութիւնը նոր հունձի գինը սրօշեց այսպէս . ցորենը 61 զուգուէ , բակլան 41 , գարին 36 : Թէպէտ աս գիները բարձր են բայց շատ գնոյ առնողներ կան , յուսալով թէ աւելի շահաւոր գնով կը ծախեն . մանաւանդ Բնդիւայի համար շատ կառնեն , ուր տեղ աս տարւան հունձը շատ քիչ եղեր է : Կառավարութիւնն ալ նաեւ մը ցորեն պիտի խրկէ Լոնտոն գինը իմանալու համար : Կոր արմուխքէն ըր ծախելէն ետքը նաեւ վարձքերը հարուրին 25 էվելցան ու կրկնայ թէ ալ աւելի պիտի էվելնան :

Քանի մը ասունէ ի վեր Բնքսանդրիայի մէջ խիստ շատ քան փարանոց կայ , որովհետեւ բերողները շահ կընեն , մանաւանդ ան նք որ Լոսթոստանէն կը բերեն , որոնց մեծ մասն ալ կեղծ խալ է , աս բանը մեծ վնաս կուտայ երկրին և առ հասարակ առաւօտուններուն , բայց կառավարութիւնը արդիւնք ու չի թողուց որ ներս մտցունեն վերջի անգամի գաղղիական շոգենաւով եկած քան փարանոց լուտակը ու պարտաւորեց անոնց տէրերը որ ետ խըրկեն , և թէ որ ուրիշ անգամ բերելու ըլլան՝ զխովին ոճնչացունելու է այն եկած գրամները որ մարդու ձեռք չանցնի :

Փրէնս Մարքիմիլիէն Հունաստանի թագաւորին եղբայրը որ անցածները աս կողմերը ճամբորդութիւն ըրաւ , Մհհհմետ Բի լի փաշային տեսած մարդասիրութեանը փախարէն՝ Կորին Լարճութեանը փառաւոր ժամացոյց մը խրկեց պիւքսէ ոսկեղօծ , որուն վրայ պատկեր մը կայ , ուր տեղ նկարված է փրէնս Մարքիմիլիէն իր ճամբորդութեան մէջ Լազիպոսի կողմերը : Եւ ժամացոյցը ինք ոտք բարձրութիւն ունի , ու շէքն ալ շատ պատուական է :

Բնգիական Փուէկովթը Լոսթոսթանդ անուն ամսուս 7 ին Պէրութէն հասնելով աս լուրը բերաւ թէ քանի մը երկաւառակութիւն ծագած է լուսնաբնակ տիրոջներուն և մարտնչներուն մէջ , բայց յիտոյ ան տեղի կառավարիչին խնամքով հաշտուելու են ասոնք մէկշմկաւ հետ . կըսէի նաեւ թէ անգղիացոց հիւպատոսը Լոսթապէմի՝ նոյն տեղի կառավարիչին հետ վէճ մը ունենալով հոպպէ իջած է :

ՎԱՄԱՔԻՆ

Պուքրէշ . 7 () գոստոս . Իպրաիլայի մէջ աղմուկներ ծագեցան . յուլիս 11 շատ մարդիկներ զէնք առած մէկ տան մը մէջ կը ժողովուէին որոնց մեծ մասը պուլլար էր . կառավարութիւնը իմացածին պէս հոն գնաց աս անտվոր ժողովքին պատճառը հարցունելու , և իմացաւ որ 4200 հոգիի ևս կրուպանն որոնց գալէն ետեւ Լուսնայէն պիտի անցնին և տաճկաց վրայ յարձակին անտուներ կառավարութեան զօրքերը սաստիկ ծեծկովցան ապստամբներուն հետ և ցիրուցան ըրին դանդը :

Եւ աղմուկին երկրորդ օրը Սայիտ փաշան Սիլիստրէյի և Ուսուճախի կառավարիչը 2,000 զօրով Իպրաիլա եկաւ , և Մարքիմիլիէն հեղե-

նապուտ փոխանորդ հիւպատոսին միաբանութեամբ ըր՝ ըսկաւ քննել քաղաքին մէջ գտնուող օտարա-կանները՝ որ ճամբու հրամանագիր չունէին :

Վալաքիայի կառավարութիւնը վարձատրեց բո-լոր պաշտօնատարները և ղեկավարները՝ որ աս կու-ւին մէջ գտնուողներն :

Պալատներէն երստեւ վեց հոգի բանաւ հոս բերին և վանքի մը մէջ արգելեցին . ուրիշ երստեւ հոգիի չափ ալ որոնց մէջ Վասիլի անուն զորաց արկղապետը կար Յունաց և Հոնիացոց նուազը փոխան , և նաւապետները չէն ուզէր վե-րստին ձեռք տալ զանոնք : Բնդ ամենքը հարելը քսան հոգիի չափ պալատներէն և սերմիացիներէն կորսնցուցին իրենց կեանքերէն , որու պատճառ-անմոռութեամբ տպատմութիւն ընելին եղաւ ա-ռանց վերջը մտածելու :

Երբոր աս ղեկավարը սկսեցաւ , իսկոյն մարդ խրկեցին ան երկրի տիրող իշխանին , որ սահմանա-գլուխը Պրաղա ըսված տեղն էր . բայց նա մինչև որ հասաւ գրեթէ ամեն բան լինցած էր : Ուստի հրամայեցին ետեւ որ խստիւ պահպանութիւն ընեն Վալաքիայի մէջ եղած բողոքութիւ պալատներէ-րուն վրայ ու նաեւ օտար բողոքներէն եկած թա-փառական սրիկաները վաճառեն հոնկէց , վերստին Պրաղա գնաց :

Քաղաքական կառավարութիւնը հրատարակեց բոլոր պալատներուն որ բնաւ հաղորդակցութիւն չընեն հասարակութեան կոնոնի դէմ գործառնու-թիւն ընդդէմը հետ , և թէ որ յանդգնելու բլան սատիւի պիտի պատժուին : Կաւ թունայի ալ կող-մի փաշաներուն և հիւպատոսներուն շրջաբերական նամակ խրկելով իմացուց ինչ որ պատահեցաւ Իպ-րաիլայի մէջ :

Հիւսէին փաշան Վիտինի կառավարիչը մեծ ըզ-գուշութեամբ պահպանութիւն ըրաւ բոլոր աս գե-տեղերէ քաղաքներուն , և ամեն տեղ զօրք խրկե-ւցաւ ըզգուշութիւն ընելու համար :

Եւ տարւան տաքը շատ վրաս տըւաւ . արմախ-ներուն հոնքին . ցորենը շատ քիչ է և աղէկ չէ , նմանապէս գարին ալ , իսկ եգիպտական ցորեն ամե-նէին լրջալու չէ :

Եւստուրը օր է օր թուշալու վրայ է , բոլոր աս տարի գրեթէ Իպրաիլայէն ապրանք գուրս չե-լաւ . անոր համար հոն գայող նաւերուն մեծ մա-սը պարտաւորեցաւ գատարի ետ գառնալ :

ՉԻՄԱՉԻՆ

Գաղղիական վերջի շոգնաւը հետեւեալ լուրե-րը բերաւ Չինացիներ վրայով :

Չինացուց կայսրը խիստ շատ բարկացած է անգ-ղիացուց վրայ , լսելով որ Պօգա թիկնիսի բերդե-րը առեր են անոնք :

Քեզէն անուն չինացի պաշտօնատարը փեքին տարեր են չլթանելով կապած , որ այն մայրաքա-ղաքը հասնելուն պէս՝ հրամայեց է կայսրը որ սղը-ցով երկու կտոր ընեն զանի , աս յանցանքը զնելով վրան թէ կաշառք կրիւր է անգղիացիներէն :

Ուրիշ երկու մանաւորին մը ևս նմանապէս մեռ-ցուցեր են , անոր վրայ ալ նոյն յանցանքը զնե-լով :

Հայտարարութիւններ հրատարակեր են փեքին

և Վանթոն քաղաքներուն մէջ , որ կայսրը եղբայրը յիսուն հազար զօրքով անգղիացուց վրայ յարձըրե-լու է բնաջինջ ընելու համար զանոնք . ու Պօգա թիկնիսի օրագրութեանը ըսածին նայելով՝ արդէն ճամբայ ելած է :

Վերջապէս կայսրը ևս միտք ունի եղեր որ ինքը անձամբ ելթայ պատերազմի անգղիացիներուն դէմ , հիւսիսային նահանգներու բոլոր ժողովուրդները հե-տը առնելով :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԶՄԻՌՆԻՒՆ

29 () ԳՈՍՏՈՍ :

Քաղաքիս առուուրը սկսաւ շարժիլ քիչ մը ու կը յուսանք թէ ասկէ ետքը օրէ օր ալ աւելի զօր-ժանութիւններ պիտի ըլլան , երբոր նոր հոնքե-րուն ապրանքները սկսին բաւականապէս գալու :

Տօրոն (քէօք պոյա) : Գուրսերէն շարունակա-բար կուգայ . բայց տակաւին երկու ծախքեր չե-ղան . անցածները 100 չուվալի չափ Պախըրու ապ-րանք վաճառվեցաւ թրքաւոր համար 225 զուռուշ խանթարը . սակայն հիմակ աս գինով չէն ուզէր վաճառելու , որովհետեւ զուրսերը առնուած գինե-րուն նայելով ձեռնառլ չէ :

Գիւլիք : Թուլ է , թէպէտեւ շատ ապրանք չե-կայ . աս օրվան արժողութիւնը 30 1/2 զուռուշ է չե-րին :

Ղէհրի : Գրեթէ ամենեւին ապրանք չի կայ . նոր հոնքը ինչպէս որ առաջուց ալ ծանուցինք խիստ քիչ է : Կայսերէն եկած նոր գիրքերը կրկին կը հաստատեն թէ՛ անցած տարվան հոնքին չորս բա-ժինին մէկ բաժինը հազիւ թէ կըլլէ : 32 զուռուշի կաւենէն եղեր հոն տեղը . ուստի բոլոր ծախքովը հոս 35-36 զուռուշի ապրանք կըլլայ :

Սակամին (մահմուդի) : Թուլ է . որովհետեւ անգղիացի վաճառականները ծախու չէն առնել . բայց կը յուսանք թէ աս վիճակին մէջը չի մնար , ու Լաւրոպէն գնոյ առնելու հրամաններ գալուն պէս յաջողակ փոփոխութիւն մը կըլլայ աս ապրան-քին վրայօք . հիմակու հիմայ 256-260 զուռուշ օ-խան զծուարավաճառ է :

Թիֆթիք : Գրեթէ ամենեւին ապրանք չի կայ , ու զուրսերէն ալ մինչև 4-5 ամիս հազիւ թէ կընայ գալ . բանված լինելիղու տեսակ ապրանքին գինը՝ 37-38 զուռուշ է . Էրանտայինը՝ 24-25 զուռուշ :

Գալամուտ : Եւստ ապրանք չի կայ , բայց և այնպէս գինները թուլ են .

Թրքաւոր տեսակը՝	80-85 զուռուշ
Բամթան՝	72-75 ”
Ինկիլդինը՝	65-70 ”
Երկրորդը՝	40-50 ”
Վարնոյը՝	30-32 ”

Թուլ : Մինչև հիմայ 1530 բեռ եկած է . երկ-վան ծախված գիները 80-95-98 զուռուշ է : Եւ-ջի օրերը թէպէտ և խիստ աւելի գիններով վաճառ-վեցաւ , բայց հիմակ անգղիացի վաճառականները մէջերին միաբանութիւն ընելով կապվեր են որ-պէս զի աւելի գին չի տան , ու աս պատճառի աս ապրանքին արժողութիւնը իջաւ ու ալ աւելի պի-տի իջնայ ըստ հասարակ կարծեաց : Թուլ բե-

րող վաճառականներն ալ մէջերին գրաւոր դաշ-նադրութիւն ըրին որ պակաս գինով ապրանք չի ծախեն , աս պայմանով որ ցած գինով գալուակ ծախողը 5000 զուռուշ տայ ընկերութեանը . բայց երկու օր չի տեւց աս միաբանութիւնը , որովհետեւ մէջերէն հրէայ վաճառական մը Սամուէլ Սիղուրօ անունով անհաւատարիմ գտնուեցաւ պայմանագրու-թեանը . որու զօրութեամբը պէտք է որ դատա-պարտվի 5000 զուռուշը հատուցանելու իր դաշնա-կից վաճառականներուն :

Սուսամ : Եւր հոնքը խիստ շատ է կրսեն . ան-ցած տարվանին երկու չափը կայ եղեր . Լաւրոպէ-ն եկած լուրերն ալ լաւ չըլլալով աս ապրանքին վրայօք պէտք է որ գինները իջնան հոս տեղ . թէ-պէտ և հին ապրանքը անցածները 52 զուռուշի վա-ճառվեցաւ . բայց չենք յուսար որ աս գինը զիմա-նայ . մինչև երկու ամիս նոր հոնքին ապրանքը կու-գայ :

Սե չամիչ : Թիւրքիներ՝ 19-20 զուռուշ խան-թարը կը վաճառվի , թէպէտ և աս տարվան հոն-քը շատ է կրսեն , բայց և այնպէս կը կարծենք թէ յիշեալ գինները սուղ չեն ու երկու ամիսէն ետքը շատ հաւանական է որ բարձրնայ :

Խաչվէ : Բիւջ ապրանք կայ ու գինները հա-տատ են . աս օրվան արժողութիւնը 620-660 զու-ռուշ է ըստ տեսակին :

Շաքար : Կիւրավաճառ է . 240-245 զուռուշ քէլէ շաքար . 220-225 ճերմակը . ու 180 զու-ռուշ թխալագոյնը : Եւստ ապրանքին քշելու ուտենք ասկէ ետքը ըլլալով՝ կարելի է թէ գինները բարձր-նան :

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ . Ը () ԴՐԱԳԻՐԸ

Շարեկան ստորագրութեան գինը՝ 120 զուռուշ է , կանխիկ . ով որ ուզէ կրնայ ստորագրվի :

Իզմիր՝ օրագրութեան ապրանք :

Պօգա՝ Վեզիր խանը Իզմիրցի Սաւաւանեան Գաւիթ աղային գրատուներ :

Պուրսա՝ Քապաքճեան Սաւթեոս ու Գրիգոր աղայ-ից մողազան :

Եզքասնգրիա՝ Եղաղանեան Կարապետ աղային մա-ղազան :

Հոպպէ՝ (Լաֆա) մեծապատիւ Սուրսա Մղային գրատուներ :

Թրքաւոր Երեւան Գրիգոր աղային գրատուներ :

Լաւրոպէ՝ Հակոբճեանեան աղայ Սարգսին մողազան

Եւստ Բարեկեանց Հարութիւն աղային մողազան :

Հարապէքիր՝ Պարօն Գամիսնոսին մողազան :

Լաշ՝ Պրքաքընեան աղայ եղբարը մողազան :

Պաղտա՝ Լեզգի առաջին թարգման աղայ Խա-չիկին տուներ :

Գաւրէթ՝ Եւանեան Կաղարեանց Հակոբ աղային վաճառատուներ :

Պոմպա՝ Երգի պարոնաց Եղանուր որդւոց և ընե-րաց վաճառատուներ :

Ով որ ուզէ կրնայ մասնաւոր բան մը տակ տալ Եւ-ջարայ Երարատեանին մէջ՝ 40 փարոյ հատուցանելով ամեն մէկ տողին համար . թէ որ արդիւնէ բանը արժա-նաւոր համար՝ օրագրութեան վերատեսուչը :